

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

2018 թվականի հունիսի 14-ին, ժամը 15⁰⁰, Հրազդան քաղաքի Գործարանային 1 հասցեում տեղի կունենա դասական ձևի աճուրդ, որը կանցկացվի «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի աճուրդի անցկացման կարգի համաձայն:

Աճուրդի կազմակերպիչը «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն է:

Աճուրդի Լոտ-001՝ մագուրի պահպանման 10 000 խոր.մետր տարողությամբ մետաղյա բաք (տեխնիկական բնութագրերը հայտարարությանը կից հավելվածում): Բաքն ունի 20-25 սմ մեռյալ նստվածքային մնացորդ: Բաքի ապամոնտաժման, տեղափոխման, նստվածքի մաքրման և «ՀրազՋԷԿ»-ի տարածքում պահեստավորման աշխատանքները կկատարվեն աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի ուժերով ու միջոցներով:

Բաքի մեկնարկային գինը սահմանված է 40 (քառասուն) միլիոն դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն

Մասնակցության համար անհրաժեշտ է ներկալացնել հետևյալ փաստաթղթերը.

- աճուրդի մասնակցության հայտը,
- աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը:

Աճուրդում հաղթողի ընտրությունը կկատարվի «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի աճուրդի անցկացման կարգի համաձայն:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձիք, որոնք մինչև աճուրդի անցկացման օրը կկատարեն վճարում 20 000 (քսան հազար) դրամի չափով:

Աճուրդի անցկացման կանոնակարգին և բաքի տեխնիկական վիճակին կարելի է ծանոթանալ մինչև աճուրդի օրը, աշխատանքային օրերին ժամը 10⁰⁰-16⁰⁰, ֆաքս՝ 0223 6-07-14, հեռ. 093-93-22-33, էլ.փոստ՝ info@raztes.am:

Աճուրդի մասնակցության հայտի և պահանջվող փաստաթղթերի ընդունումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից մեկ օր առաջ:

10 000 մ³ մազուրի պահպանման մետաղական բաքերի
տեխնիկական բնութագիրը

1. Տրամագիծը – 34,2 մ
2. Բարձրությունը – 12 մ
3. Տարողությունը – 10 000 մ³
4. Բաքի մոտավոր քաշը – 185 տոննա

1. Բաքի եզրային պատերի բնութագիրը

Բաքի եզրային պատերը մոնտաժված են գլանաձև երկաթյա թիթեղից 8 գոտիներով:

Յուրաքանչյուր գոտու չափսերը տրված են աղյուսակում.

Գոտիների h/h	Բարձրությունը (մ)	Երկարությունը (մ)	Հաստությունը (մմ)	Մոտավոր քաշը (տոննա)
I	1,5	107	δ=7,5	9,449
II	1,5	107	δ=7,9	9,953
III	1,5	107	δ=8,0	10,079
IV	1,5	107	δ=8,0	10,079
V	1,5	107	δ=8,8	14,078
VI	1,5	107	δ=10,8	13,607
VII	1,5	107	δ=11,5	14,489
VIII	1,5	107	δ=13,7	17,260

Σ 95,991 տոննա

2. Հատակի բնութագիրը

Հատակը պատրաստված է թերթավոր պողպատից.

հաստությունը - δ=8,0 մմ,

մոտավոր քաշը - 57,660 տոննա:

3. Առաստաղի բնութագիրը

Առաստաղը պատրաստված է 5,0 մմ և 3,0 մմ հաստությամբ մետաղյա թիթեղներից.

δ=5,0 մմ հաստությամբ թիթեղի մոտավոր քաշը՝ 2,074 տոննա,

δ=3,0 մմ, հաստությամբ թիթեղի մոտավոր քաշը՝ 20,370 տոննա:

4. Ամրացումը կրող կոնստրուկցիաների համար օգտագործվել են անկյունակներ և շվելերներ 8,903 տոննա մոտավոր քաշով:

5. Մազուրի մեռյալ նստվածքի քանակը բաքում կազմում է մոտ 30 տոննա:

